

Հաշվետվություն

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Ըստ հաստատված ժամանակացույցի 2017 թվականի ընթացքում տեսչական ստուգումներ են իրականացվել ՀՀ բոլոր՝ 10-ը մարզերի մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչություններում:

Իրականացված ստուգումների արդյունքում (10-ը մարզպետարաններ և 103 համայնքներ) տեսչության կողմից ՀՀ մարզպետներին ներկայացվել է միջնորդություն՝ թվով 55 համայնքների պաշտոնատար անձանց **10700000** դրամ գումարի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Մարզպետների կողմից կայացվել է թվով 28 համայնքների պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ՝ **4200000** դրամ գումարի չափով: Վարչական տույժերից 2017թ. պետական բյուջե է մուտքագրվել ընդամենը **5038000** դրամ, որից 2017 թվականին կիրառված վարչական տույժերից գանձվել է **2000000** դրամ, իսկ **3038000** դրամը նախորդ տարիներին կիրառված տույժերից:

Արձանագրվել են նաև վարչական պատասխանատվության չհանգեցնող խախտումներ, որոնք վերացնելու համար միջնորդություններ են ներկայացվել ՀՀ մարզպետներին՝ համայնքների ղեկավարներին պարտադիր կատարման ցուցումներ և ժամկետներ տալու մասին:

Տեսչության կողմից հերթապահ կադաստրային քարտեզների վարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ են իրականացվել կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային, Մարզերի միավորված, Շիրակի և Լոռու, մարզային ստորաբաժանումներում:

2017թ.-ի տեսչական ստուգումների ընթացքում արձանագրված վարչական տուգանքների, տեսչության պետի և մարզպետների կողմից կայացված որոշումների և գանձված գումարների ամփոփ տվյալներ

Հ/Հ	Մարզի անվանումը	Ստուգված համայնքների թեւում	Տեսչության պետի միջնորդագրի		Մարզպետի կողմից կայացված որոշումներով		2017թ.-ի ստուգումներով կիրառված տուգանքներից գանձված գումարի չափը	Նախկինում կիրառված տուգանքներից գանձված գումարի չափը
			Տուգանքի չափը	Համայնքների թեւում	Տուգանքի չափը	Համայնքների թեւում		
1	Արագածոտն	11	1300000	7	1000000	7	350000	1388000
2	Արարատ	9	1100000	7	100000	1	100000	0
3	Արմավիր	21	1600000	12	0	0	0	0
4	Գեղարքունիք	11	1100000	6	400000	3	400000	200000
5	Լոռի	8	1250000	7	1250000	7	0	700000
6	Կոտայք	12	2950000	8	1150000	8	1150000	250000
7	Շիրակ	17	200000	2	0	0	0	0
8	Սյունիք	5	0	0	0	0	0	0
9	Տավուշ	7	900000	4	0	0	0	0
10	Վայոց Ձոր	2	300000	2	300000	2	0	500000
	ԸՆԴԱՄԵՆԸ	103	10700000	55	4200000	28	2000000	3038000